ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 2003-2012 ԹԹ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՆՎԵՐ ԿՈՍՏԱՆՅԱՆ

Բանալի բառեր - Հայաստանի երրորդ Հանրապետություն, ժողովրդավարական անցում/փոխակերպում, մասնակցային ժողովրդավարություն, ավտոկրատիա, կուսակցություններ, խորհրդարանական ընտրություններ, մեծամասնական ընտրական համակարգ, համամասնական ընտրական համարագ, միաբևեռայնություն, Ազգային Ժողով:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Պատմություն և քաղաքականություն» գիտական հանդեսի նախորդ համարներից մեկում անդրադարձել էինք ԽՍՀՄ փլուզմանը և ՀՀ անկախացմանը հաջորդած առաջին տասնամյակում կուսակցությունների համար ի հայտ եկած իրավաքաղաքական բարենպաստ պայմաններում վերջիններս գործունեության առանձնահատկություններին՝ մասնավորաբար խորհրդարանական ընտրություններին նրանց մասնակցությանը, գրանցած արդյունքներին, Հայաստանում ժողովրդավարական անցման գործընթացնում կուսակցությունների ունեցած դերին[1]: Վերոհիշյալ հոդվածը վերաբերելի էր պատմաքաղաքական կոնկրետ ժամանակահատվածում՝ 1990-1999 թթ. տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններին: Այս հոդվածում փորձել ենք վեր հանել 2003-2012 թթ. տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններին ՀՀ կուսակցությունների մասնակցության առանձնահատկությունները: Հարկ է շեշտել նաև ընտրությունների վերաբերյալ միջազգային և տեղական անկախ դիտորդա-

[1] Տե՛ս **Գ. Քեռյան**, **Ն. Կոստանյան**, Հայաստանի երրորդ Հանրապետության քաղաքական կուսակցությունների մասնակցությունը 1990-1999թթ. խորհրդարանական ընտրություններին, «Պատմություն և քաղաքականություն», թիվ 2(13), Երևան 2021, էջ 117-127:

կան առաքելությունների եզրակացությունների ուսումնասիրությունը, ինչը ևս լայնորեն իրականացվել է:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2002 թվականին ընդունվեց «Կուսակցությունների մասին» նոր օրենքը, որը կուսակցությունների գործունեության համար սահմանում էր խաղի նոր կանոններ[1]: Կուսակցությունների գործունեության սույն իրավական կարգավորման ընդունումից զատ, յուրահատուկ մթնոլորտ էր ստեղծվել նաև հանրային-քաղաքական կյանքում: Բանն այն է, որ 1998 թվականին Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականից, ապա 1999 թվականի հոկտեմբերի 27-ի իրադարձություններից հետո կարծես ժողովրդավարացման գործընթացները կանգ էին առել և նույնիսկ տեղի էր ունենում հետընթաց՝ դեպի նախագահական ավտոկրատիա: Պետության քաղաքական իշխանության մեջ առանցքային դերակատարը մնում էր հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը, որը և փորձեց 2003 թվականին սահմանադրական փոփոխությունների նախագծով ավելի ամրացնել իր դիրքերը հանրապետությունում: *2003 թվականի մայիսի 25-ի խորհրդարանական ընտրությունները*, որի արդյունքում պետք է ձևավորվեր երրորդ գումարման ԱԺ-ն, անցան յուրահատուկ քաղաքական իրավիճակում: Նույն օրը տեղի էր ունենում նաև վերոնշյալ սահամադրական հանրաքվեն, որի արդյունքում, սակայն, նախագահի առաջարկած տարբերակը չարժանացավ ընտրողների հավանությանը: Ուշագրավ մեկ այլ հանգամանք էր այն, որ առաջին անգամ խորհրդարանական ընտրությունները տեղի էին ունենում նախագահական ընտրությունների հետ նույն տարում, դեռ ավելին՝ երկրի ղեկավարի ընտրությունից ընդամենը 2 ամիս անց: Խորհրդարանական ընտրություններին նախորդած նախագահական ընտրություններում պայքարը ընթանում էր գործող նախագահ Ռ. Քոչարյանի, և ՀԺԿ նախկին ղեկավար Կարեն Դեմիրճյանի որդու՝ Ստեփան Դեմիրճյանի միջև: Երկու փուլով տեղի ունեցած քվեարկության արդյուքում, ըստ ԿԸՀ պաշտոնական հաղորդման, նախագահ ընտրվեց Ռոբերտ Քոչարյանը[2]: Միջազգային և տեղական դիտորդական առաքելությունների զեկույցներում, ինչպես նաև ընդդիմադիր ուժերի արտահայտած մտքերում բարձրացվում են մտահոգություններ ընտրությունն-

[1] Տե՛ս ՀՀ օրենքը Կուսակցությունների մասին, ընդունված 2002 թվականի հուլիսի 3-ին, https://www.arlis.am/documentview.aspx?docid=75487, հասանելի է 25.08.22:

[2] Տե՛ս ՀՀ նախագահի 2003թ. Ընտրությունների երկրորդ փուլի պաշտոնական արդյունքներ ,https://www.elections.am/PageFor/Elections%201999-2005, հասանելի է 02.04.22:

րի՝ կեղծված լինելու մասին: Ըստ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության վերջնական զեկույցի՝ ընտրությունները չէին համապատասխանում ժողովրդավարական ընտրությունների միջազգայնորեն ընդունված չափանիշներին: Ըստ զեկույցի՝ թեև ընտրություններն ուղեկցվել են համապետական լայնամասշտաբ ընտրարշավով, այնուամենայնիվ թեկնածուների համար ընտրական գործընթացում չեն ապահովվել հավասար պայմաններ: Քվեարկության, ձայների հաշվարկի և աղյուսակավորման գործընթացներում նկատվել են լուրջ խախտումներ՝ այդ թվում քվեաթերթիկների լայնամասշտաբ լցոնման դեպքեր: Զեկույցում խոսվում է նաև ընդդիմադիր գործիչների անհիմն ձերբակալությունների, հօգուտ գործող նախագահի լրատվական դաշտի ակնհայտ կողմնակալության, վարչական լծակների լայնամասշտաբ օգտագործման դեպքերի մասին: Դիտորդական առաքելությունը ժողովրդավարական ընտրությունների անցկացման ձախողումը կապում է ոչ այնքան ընթացակարգային և տեխնիկական հարցերի, որքան իշխանությունների քաղաքական կամքի բացակայության հետ: Այս համատեքստում իշխանություններին խորհուրդ է տրվում անել քայլեր՝ ընտրական օրենսդրության պահանջները ամբողջությամբ կյանքի կոչելու և քվեարկության գործընթացի նկատմամբ հանրության վստահությունը վերականգնելու ուղղությամբ[1]: Ներքաղաքական պայքարի այս անձնավորված և հակաժողովրդավարական բնույթը իր ազդեցությունը թողեց նաև 2003-ի խորհրդարանական ընտրությունների վրա: Նախագահական ընտրություններում հիմնական մրցակիցներ Քոչարյանն ու Դեմիրճյանն այս ընտրություններում հանդես եկան տարբեր քաղաքական ուժերի առաջնորդների կարգավիճակում: Թեև Քոչարյանը հրապարակայնորեն հանդես էր գալիս որպես անկուսակցական ղեկավար և շարունակում էր պնդել, թե «Իր կուսակցությունը ժողովուրդն է», բայցևայնպես ակնհայտ էր նրա ազդեցությունը «Միասնություն» դաշինքից առանձնացած ամենախոշոր քաղաքական միավորման՝ Հայաստանի Հանրապետական կուսակցության վրա: Իսկ ՀԺԿ առաջնորդ Ստեփան Դեմիրճյանը ընտրություններին մասնակցեց Վազգեն Սարգսյանի կրտսեր եղբոր, ՀՀ նախկին վարչապետ Արամ Սարգսյանի առաջնորդած «Հանրապետություն» կուսակցության հետ կազմած «Արդարություն» դաշինքի ձևաչափով: Թեև ընտրություններում հիմնական մրցապայքարը հենց այս ուժերի միջև էր, բայցևայնպես այս ընտրությունների արդյունում ևս ձևավորվեց բազմակուսակցական խորհրդարան: 2003-ի մայիսի

[1] Տե՛ս OSCE/ODIHR, Republic Of Armenia Presidential Election 19 February and 5 March 2003, Election Observation Mission Final Report, էջ 1-2, https://www.osce.org/files/f/documents /8/7/ 14054.pdf, հասանելի է 03.05.22:

25-ի խորհրդարանական ընտրություններում ևս պատգամավորական 131 տեղի համար ընտրությունը անցկացվեց խառը ընտրակարգով (75-ը համամասնական, 56-ը մեծամասնական): Ընտրություններին մասնակցում էին 22 կուսակցություն և 1 կուսակցությունների դաշինք: Այս ընտրություններն առանձնացան ընտրողների աննախադեպ ցածր մասնակցությամբ՝ 51 տոկոս, ինչից կարող ենք եզրակացնել, որ երկու ամիս առաջ տեղի ունեցած նախագահական ընտրությունների ընթացքում արձանագրված զանգվածային ընտրախախտումներով և այլ գործոններով պայմանավորված, ընտրողները առանձնապես մեծ հույսեր չէին կապում ընտրությունների արդյունքների, դրանց արդարության և ձևավորվելիք խորհրդարանի կազմի հետ: Ընտրությունների արդյունքում 5 տոկոսի շեմը հաղթահարեցին 6 կուսակցություն և 1 դաշինք[1].

1. «Հայաստանի Հանրապետական կուսակցություն» – 23,66% (23 պատգամավոր)
2. «Արդարություն» դաշինք - 13,71% (14 պատգամավոր)
3. «Օրինաց Երկիր» կուսակցություն - 12,60% (12 պատգամավոր)
4. ՀՅԴ - 11,45% (11 պատգամավոր)
5. «Ազգային միաբանություն» - 8,91% (9 պատգամավոր)
6. «Միավորված աշխատանքային կուսակցություն» - 5,67% (6 պատգամավորներ):

Սրան զումարվեցին նաև մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքները. տարբեր վերադասավորումների վերջնարդյունքում ՀՀ ԱԺ երրորդ գումարման խմբակցությունների ձևավորած պատկերը այսպիսին էր[2].

1. ՀՀԿ-38 պատգամավոր
2. «Օրինաց երկիր» - 8 պատգամավոր
3. «Արդարություն» - 12 պատգամավոր
4. ՀՅԴ-11 պատգամավոր
5. «Ազգային միաբանություն» - 7 պատգամավոր
6. «Միավորված աշխատանքային կուսակցություն- 6 պատգամավոր
7. «Ժողովրդական պատգամավոր» - 15 պատգամավոր
8. «Գործարար» պատգամավորական խումբ - 10 պատգամավոր
9. Խմբակցություններում չընդգրկված պատգամավորներ - 21 պատգամավոր

---

[1] Տե՛ս ՀՀ ԱԺ 2003թ. համամասնական ընտրությունների պաշտոնական արդյունքներ, https://www.elections.am/PageFor/Elections%201999-2005, հասանելի է 02.04.22:

[2] Տե՛ս ՀՀ ԱԺ երրորդ գումարման խմբակցությունների կազմերը, http://www.parliament.am/deputies.php?lang=arm&sel=factions&SubscribeEmail=&show_session=3, հասանելի է 02.04.2021:

Թեև կուսակցությունների մեջ ակնհայտ առաջատարը՝ վարչական լծակներին տնօրինելու և կազմակերպական կառուցվածքի առումով Հայաստանի Հանրապետական կուսակցությունն էր, բայց ընտրությունների արդյունքում ոչ մի կուսակցություն չկարողացավ խորհրդարանում ստանալ բացարձակ մեծամասնություն և միայնակ ձևավորել կառավարություն: Անհրաժեշտություն առաջացավ ձևավորել կոալիցիոն կառավարություն: Այդպես, Երրորդ Հանրապետության պատմության մեջ առաջին անգամ ԱԺ-ում ներկայացված երեք կուսակցություններ՝ ՀՀԿ-ն, ՕԵԿ-ը և ՀՅԴ-ն քաղաքական կոալիցիա կազմեցին եւ համատեղ կառավարություն ձևավորեցին: Վարչապետ նշանակվեց ՀՀԿ ղեկավար Անդրանիկ Մարգարյանը, իսկ ԱԺ նախագահ ընտրվեց ՕԵԿ նախագահ Արթուր Բաղդասարյանը: Ընտրություններին հաջորդած ժամանակահատվածում գնալով խորանում էր բևեռացումը քաղաքական իշխանությունների և ընդդիմության միջև, ինչի ապացույցներից մեկը դարձավ խորհրդարանական և արտախորհրդարանական ընդդիմության բողոքի ակցիայի վրա կիրառված բռնի ուժը և բախումները՝ 2004 թվականի ապրիլի 12-ին[1]: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության վերջնական զեկույցի համաձայն՝ 2003թ. մայիսի 25-ի խորհրդարանական ընտրությունները Հայաստանում նշանավորվեցին քարոզարշավի հավասարության և լրատվամիջոցների համեմատաբար անկողմնակալ լուսաբանման առումով գրանցած առաջընթացով՝ ի համեմատություն երկու ամիս առաջ տեղի ունեցած նախագահական ընտրությունների: Այնուամենայնիվ, ձայների հաշվարկի, աղյուսակավորման, քվեարկության սենյակներում չլիազորված անձանց ներկայության և այլ խնդիրներ հաշվի առնելով՝ դիտորդական առաքելությունը արձանագրում է, որ ընտրությունները չեն համապատասխանում ժողովրդավարական ընտրությունների միջազգային չափանիշներին[2]: 2003 թվականի խորհրդարանական ընտրություններին հաջորդած տարիները ուղեկցվեցին քաղաքական տարատեսակ զարգացումներով, սակայն քաղաքական դաշտը մնում էր միաբևեռ՝ քաղաքական համակարգում նախագահ Քոչարյանի և Հայաստանի Հանրապետական կուսակցության ակնհայտ գերիշխող դիրքով: Այսպիսի միաբևեռայնության պայմաններում են անցնում *ԱԺ չորրորդ գումարման՝ 2007*

---

[1] Տե՛ս «2004 –ի ապրիլի 12 –ը մարտի 1 ի նախերգանքն էր», https://a1plus.am/hy /article/ 71054, հասանելի է 17.06.2022:

[2] Տե՛ս OSCE/ODIHR, Election Observation Mission Final Report, Republic Of Armenia, Parliamentary Elections 25 May 2003, էջ 3-5, https://www.osce.org/files/f/documents/4/6/ 42371.pdf, հասանելի է 07.10.2022:

թվականի մայիսի 12-ի ընտրությունները: Ընտրությունները հատկապես կարևոր էին նրանով, որ գրեթե մեկ տարի անց՝ 2008 թվականին փետրվարին լրանում էր նախագահ Քոչարյանի պաշտոնավարման երկրորդ ժամկետը: Ըստ Սահմանադրության՝ վերջինս այլևս չէր կարող առաջադրվել այդ պաշտոնին, ուստի ակնհայտ էր դառնում, որ մեկ տարուց ՀՀ-ն ունենալու է նոր նախագահ: Նախագահական կարևոր ընտրություններից առաջ ուժերի չափման և հանրային տրամադրությունների գնահատման հանգամանքով էր նաև մեծապես պայմանավորված քաղաքական դերակատարների հետաքրքրությունը այս ընտրություններում: ՀՀ չորրորդ գումարման Ազգային ժողովի ընտրություններին (131 տեղ՝ 90 համամասնական և 41 մեծամասնական ընտրակարգի համար) համամասնական ընրակարգով մասնակցում էր 23 քաղաքական ուժ՝ 22 կուսակցություն և 1 դաշինք: Այս ընտրություններին, ի համեմատություն 2003-ի ընտրությունների, գրանցվեց ընտրողների մասնակցության ավելի բարձր ցուցանիշ՝ 59.4%: Հատկանշական իրողություն է այն, որ «ավանդական» ընդդիմություն համարված ուժերից ՀԺԿ-ն և «Ազգային միաբանությունը» նույնիսկ չհաղթահարեցին նախատեսված 5 տոկոսանոց շեմը և չհայտնվեցին խորհրդարանում՝ իրենց տեղը զիջելով նոր ուժերի: Օրենքով սահմանված հինգ տոկոսի սահմանագիծը հաղթահարեց 5 կուսակցություն[1].

1. Հայաստանի Հանրապետական կուսակցություն- 32.8 %
2. Բարգավաճ Հայաստան կուսակցություն - 14.7 %
3. ՀՅԴ - 12.7 %
4. Օրինաց Երկիր կուսակցություն - 6.8 %
5. Ժառանգություն կուսակցություն - 5.8 %:

Սրան են գումարվում մեծամասնական ընտրակարգով բաշխված մանդատները, որի արդյունքում Ազգային Ժողովում ձևավորվում են հինգ խմբակցություններ՝ ուժերի այսպիսի հարաբերակցությամբ[2].

1. ՀՀԿ - 62 պատգամավոր
2. ԲՀԿ - 26 պատգամավոր
3. ՀՅԴ - 16 պատգամավոր
4. ՕԵԿ - 8 պատգամավոր
5. Ժառանգություն – 7 պատգամավոր
6. Խմբակցություններում չընդգրկված պատգամավորներ- 12 պատգամավոր

---

[1] Տե՛ս ՀՀ ԱԺ 2007թ. համամասնական ընտրությունների պաշտոնական արդյունքներ, https://www.elections.am/aj2007/, հասանելի է 12.10.2021:

[2] Տե՛ս ՀՀ ԱԺ չորրորդ գումարման խմբակցությունների կազմերը, http://www.parliament.am/deputies.php?lang=arm&sel=factions&SubscribeEmail=&show_session=4, հասանելի է 19.04.2022:

Այս ընտրությունները ևս ակտիվորեն դիտարկվել են միջազգային դիտորդական կազմակերպությունների կողմից: Այսպես, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության վերջնական զեկույցից տեղեկանում ենք, որ թեև Հայաստանի իշխանությունները վերացրել են նախորդ ընտրություններում նշված թերությունների մի մասը և կան որոշակի դրական միտումներ, այնուամենայնիվ ընտրությունները ամբողջապես չէ, որ անցկացվել են ժողովրդավարական ընտրությունների միջազգայնորեն ընդունված չափանիշներին համապատասխան: Խախտումների հիմնական տվյալները վերաբերում են քարոզչության ընթացքում իշխող Հայաստանի Հանրապետական կուսակցության կողմից պետական լծակները օգտագործելու, պետության ու կուսակցության դերի դիտավորյալ զուգամիտման դեպքերին, ձայների գնման դեպքերին ոչ ամբողջական և ոչ հետևողական արձագանքմանը: Զեկույցում ասվում է նաև, որ 2003-ի համեմատությամբ զգալիորեն փոփոխված Ընտրական օրենսգիրքը կուռ հիմքեր է նախատեսում ժողովրդավարական ընտրությունների անցկացման համար, սակայն դրա կիրարկումը մեծ մասամբ կախված է իշխանությունների քաղաքական կամքից[1]: Խորհրդարան անցան երկու նոր քաղաքական ուժեր՝ գործարար Գագիկ Ծառուկյանի առաջնորդած «Բարգավաճ Հայաստան» և ՀՀ առաջին արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանի գլխավորած «Ժառանգություն» կուսակցությունները: Գագիկ Ծառուկյանն իր կուսակցությունը հիմնադրել էր դեռևս 2004-ին: Հաջորդ տարիներին ձեռք բերելով տարատեսակ մեդիառեսուրսներ, ինչպես նաև տիրապետելով հսկայական ֆինանսական կարողության՝ ԲՀԿ-ն Հայաստանում քաղաքական երկրորդ ուժը դառնալու իրական հայտ ներկայացրեց: Ըստ հայաստանյան մամուլի տարբեր հրապարակումների՝ այս քաղաքական ուժի ճանաչելիության գրավականը, սակայն, ոչ թե քաղաքական գաղափարախոսության առկայությունն էր, կամ վերջինիս առաջադրած քաղաքական ծրագրին հանրության հավանությունը, այլ Գագիկ Ծառուկյանի անձի շուրջ ձևավորված բարեգործի իմիջը: Խորհրդարանական ընտրություններից դեռ մեկ տարի առաջ ակնհայտ էր նախագահ Քոչարյանի դրական վերաբերմունքը այս ուժի նկատմամբ: Եթե մինչև 2006 թվականը Հայաստանում չկար գեթ մեկ ուժ, որը կազմակերպական կարողությունների, վարչական, ֆինանսական, լրատվական և այլ ռեսուրսներին տիրապետելու առումով կարող էր մրցել ՀՀԿ-ի հետ, ապա այժմ այդ տեղը կարծես զբաղեցնում է ԲՀԿ-ն: Պատահական չէ, որ ոչ միայն

[1] Տե՛ս OSCE/ODIHR, Election Observation Mission Final Report, Republic Of Armenia, Parliamentary Elections 12 May 2007, էջ 1-2, https://www.osce.org/files/f/documents /d/d/26606.pdf, հասանելի է 10.09.2022:

հայկական, այլև ռուսական մամուլի էջերում ոչ մեկ անգամ է գրվել այն մասին, որ ԲՀԿ-ին նման արտոնություններ տրամադրելը և նրան քաղաքականապես «աճեցնելը» բխում է հենց Քոչարյանի շահերից, որովհետև վերջինս, ինչպես խոսվեց վերևում, նախագահի պաշտոնը լքելուց հետո հավականություններ ուներ մնալ վարչապետի պաշտոնում (կամ առնվազն հավասարակշռել ուժերի հարաբերակցությունը հօգուտ իրեն), ինչը անհնարին էր առանց խորհրդարանում ձևավորված քաղաքական մեծամասնության կամ գոնե խորհրդարանական ծանրակշիռ ներկայություն ունեցող ուժի աջակցության: Քաղաքական ասպարեզ ԲՀԿ-ի նման տպավորիչ մուտքը կարող էր հանգեցնել քաղաքական համակարգի միաբևեռայնության շրջանի ավարտին: Սակայն հետագա զարգացումները, ինչպես նաև ՀՀԿ գլխավորած կոալիցիոն կառավարություններին ԲՀԿ-ի պարբերական մաս կազմելը բացառեցին այս հեռանկարի իրականացումը: Ինչպես տեսնում ենք վերը բերված տվյալներից՝ այս ընտրությունների արդյունքում ևս ձևավորվեց բազմակուսակցական խորհրդարան և ոչ մի ուժի չհաջողվեց կազմել բացարձակ մեծամասնություն ԱԺ-ում, ուստի ձևավորվեց կոալիցիոն կառավարություն: Այն կայացավ ՀՀԿ-ի, ԲՀԿ-ի և ՀՅԴ-ի միջև կնքված համագործակցության հուշագրի արդյունքում: Ընդդիմադիր դիրքերից էին հանդես գալիս ՕԵԿ-ը և Ժառանգությունը: ՀՀԿ նախագահ, նախկին վարչապետ Անդրանիկ Մարգարյանի մահվանից հետո իշխող կուսակցության ղեկավարի պաշտոնը ստանձնում է պաշտպանության նախկին նախարար Սերժ Սարգսյանը: Վերջինս էլ նշանակվում է կոալիցիոն կառավարության վարչապետ: Մինչև հաջորդ՝ 2012թ. խորհրդարանական ընտրություններն ընկած ժամանակահատվածում տեղի ունեցան կարևորագույն քաղաքական իրադարձություններ: Ինչպես նշել ենք վերևում՝ քաղաքական այս շրջափուլի ամենից առանցքային իրադարձությունը 2008 թվականի նախագահական ընտրություններն էին: Թեև այս ընտրություններին առանձին մասնակցելու հայտ էին ներկայացրել նաև խորհրդարանում ներկայացված ուժերից ՕԵԿ-ը ՝ հանձին Արթուր Բաղդասարյանի, և ՀՅԴ-ն ՝ հանձին Վահան Հովհաննիսյանի, սակայն հիմնական մրցակցությունը ընթանում էր ՀՀԿ նախագահ, ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանի և իր հրաժարականին հաջորդած տասնամյա քաղաքական պասիվությունից հետո քաղաքական ասպարեզ վերադարձած, ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի միջև: Մի կողմից անկախության սկզբնական շրջանից բարձր պաշտոններ, իսկ վերջին տասնամյակում ուժային նախարարի և վարչապետի պաշտոնը զբաղեցնող, վարչական լծակներին ամբողջությամբ տնօրինող ՀՀԿ ղեկավարի, մյուս կողմից տասը տարի քաղաքական պասիվություն պահպանած,

բայց իշխանությունների վարած քաղաքականությունը կոշտ քննադատության[1] ենթարկելու հռետորաբանությամբ քաղաքական հայտ ներկայացրած երկու թեկնածուների առճակատումը թեժ մրցակցություն էր խոստանում: Ընտրություններում Սերժ Սարգսյանին էին սատարում խորհրդարանական ամենամեծ խմբակցություններ ունեցող ՀՀԿ-ն և ԲՀԿ-ն, ՕԵԿ-ը և ՀՅԴ-ն, ինչպես նշեցինք, սկզբնական շրջանում հանդես էին գալիս սեփական թեկնածուներով, իսկ Լևոն Տեր-Պետրոսյանին խորհրդարանական ուժերից աջակցություն հայտնեց «Ժառանգություն» կուսակցությունը: Այսպիսով, ԱԺ-ում ներկայացված բոլոր ուժերը այս կամ այն կերպ մասնակցում էին այս գործընթացին: Արդյունքում, ԿԸՀ հրապարակած պաշտոնական տվյալների համաձայն՝ ՀՀ նախագահ ընտրվեց Սերժ Սարգսյանը[2]: Դեռևս նախընտրական փուլում, այնուհետև բուն քվեարկության օրը արձանագրված բազմաթիվ ընտրախախտումների դեպքերը, որոնք, ի դեպ, արձանագրված են նաև միջազգային դիտորդական առաքելությունների զեկույցներում[3], հիմք տվեցին ընդդիմադիր թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանին կեղծված որակել ընտրությունները և չճանաչել վերջինիս արդյունքները: Հայտարարելով ընտրություններում սեփական հաղթանակի մասին՝ Տեր-Պետրոսյանը սկսում է բողոքի շուրջօրյա գործողություններ Երևանի Ազատության հրապարակում՝ նպատակ ունենալով փողոցային ճնշմամբ հասնել իշխանության: Ակցիաներին են միանում մի շարք պետական-քաղաքական գործիչներ: Ծայրահեղ բևեռացված ներքաղաքական իրավիճակն ի վերջո հանգեցնում նրան, որ 2008 թվականի մարտի 1-ին ոստիկանությունը բռնի ուժ է կիրառում խաղաղ ցուցարարների դեմ: Բախումների արդյունքում սպանվում է 10 մարդ: Այս իրադարձություններին հաջորդում է քաղաքական հետապնդումների մի մեծ ալիք, որի արդյունքում ձերբակալվում, այնուհետև կալանավորվում ու ազատազրկան են դատապարտվում ընդդիմադիր շարժման մի շարք առաջնորդներ, այդ թվում՝ ՀՀ նախկին արտգործնախարար

---

[1] Վերադառնալով ակտիվ քաղաքականություն՝ դեռևս 2007-ի սեպտեմբերին Տեր-Պետրոսյանը կոշտ քննադատության էր ենթարկել օրվա իշխանություններին՝ նրանց մեղադրելով պետական հարստությունը գրպանելու, պետությունում «կլեպտոկրատիա» (գողապետություն) հաստատելու, և բազմաթիվ այլ անօրինականությունների մեջ: Տե՛ս Լևոն Տեր-Պետրոսյան, ելույթ, Երևան, 21.09.2007թ. http://septemberi21.blogspot.com/2007/11/blog-post.html, հասանելի է 16.08.2022:

[2] Տե՛ս ՀՀ նախագահի 2008թ. ընտրությունների պաշտոնական արդյունքները, https://www.elections.am/nx2008/, հասանելի է 19.04.2022:

[3] Տե՛ս OSCE/ODIHR, Election Observation Mission Final Report, Republic Of Armenia, Presidential Election, 19 February 2008, https://www.osce.org/files/f/documents/5/b/32114.pdf, հասանելի է 30.09.2022:

Ալեքսանդ Արզումանյանը, «Հայկական Ժամանակ» թերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանը, ԱԺ պատգամավոր Սասուն Միքայելյանը և այլք: Հետագայում ՄԻԵԴ վճիռներով հաստատվում է, որ 2008-ին իսկապես խախտվել է Լևոն Տեր-Պետրոսյանի՝ խաղաղ հավաքներ անելու իրավունքը[1]: Մարտիմեկյան իրադարձություններից իշխող ՀՀԿ-ն կոալիցիոն նոր հուշագիր է ստորագրում խորհրդարանական ՕԵԿ, ՀՅԴ և ԲՀԿ խմբակցությունների հետ. վարչապետ է նշանակվում Տիգրան Սարգսյանը: Միջազգային հանրության և ներքաղաքական ճնշումներին տեղի տալով՝ ՀՀ իշխանությունները 2011 թվականին ազատ են արձակում 2008-ին ձերբակալված անձանց: Նրանք համալրում են դեռևս 2008 թվականի օգոստոսին Լևոն Տեր-Պետորսյանի ձևավորված նոր քաղաքական պլատֆորմի՝ Հայ Ազգային Կոնգրեսի շարքերը: Վերջինս 2012 թվականի խորհրդարանական ընտրություններին ընդառաջ դառնում է ընդդիմադիր ձայների գլխավոր հավակնորդներից մեկը: ԱԺ հինգերորդ գումարման՝ *2012 թվականի մայիսի 6-ի խորհրդարանական ընտրությունները* ևս յուրահատուկ ստուգատես էին կուսակցությունների համար: Ինչպես նախորդ գումարման ԱԺ ընտրությունները, այս ընտրությունները ևս մեծապես կարևորվում էին այն հանգամանքով, որ հող էին նախապատրաստում 2013 թվականին տեղի ունենալիք նախագահական ընտրությունների համար: Ինչպես նշել ենք, 2008-ի նախագահական ընտրություններին հաջորդած քաղաքական զարգացումները մեծապես ազդեցին ՀՀ քաղաքական համակարգի ընթացիկ միտումների վրա և անխուսափելիորեն իրենց արտացոլումը գտան 2012 թվականի խորհրդարանական ընտրություններում: Մարտիմեկյան իրադարձություններից հետո ձևավորված կոալիցիոն կառավարությունը մեկ տարուց էլ քիչ կյանք ունեցավ: Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման նպատակով ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի կողմից նախաձեռնված «ֆուտբոլային դիվանագիտությունը» կոալիցիայի անդամ ՀՅԴ-ն որակում է որպես Հայաստանի ազգային շահերին հակասող և ժամանակավրեպ քաղաքականություն և դուրս է գալիս կոալիցիայից ու ընդունում ընդդիմադիր քաղաքական կեցվածք: ՀԱԿ-ը և Ժառանգությունը ևս շարունակում են գործունեությունը ընդդիմադիր դաշտում: 2012թ. ընտրությունները տեղի ունեցան խառը ընտրակարգով. Ազգային Ժողովի 131 տեղերից 41-ը նախատեսված էին մեծամասնական, 90-ը՝ համամասնական ընտրակարգի համար: Ինպես նկատում ենք 1995 թվականից ի վեր, շարունակաբար ավելացվել է հա-

[1] Տե՛ս «ՄԻԵԴ-ը ճանաչել է Լևոն Տեր-Պետրոսյանի իրավունքի խախտումները», https://www.aravot.am/2019/04/25/1038592/, հասանելի է 01.05.2022:

մամասնական ընտրակարգով նախատեսված պատգամավորական տեղերի թիվը, ինչը, մեր կարծիքով արվել է ընտրությունները միջանձնային պայքարի մակարդակից բարձրացնելու, և կուսակցություններին ընտրական գործընթացների հիմնական դերակատարներ դարձնելու միջոցով պայքարը գաղափարական դաշտ բերելու նպատակով: Ընտրություններին համամասնական ընտրակարգով մասնակցում էին 8 կուսակցություն և 1 կուսակցությունների դաշինք: Մեծամասնական ընտրակարգով մասնակցել են 139 թեկնածուներ՝ 41 ընտրատարածքներում: Այդ ընտրատարածքներից 13-ը գտնվել են Երևանում, 28-ը՝ մարզերում: Ընտրություններին հետևել է 31.451 տեղական և 647 միջազգային դիտորդ: Ի համեմատություն խորհրդարանական նախորդ ընտրությունների՝ կարող ենք ասել, որ այս անգամ մասնակցության ցուցանիշը բավականին բարձր էր՝ մոտ 63%:

Համամասնական ընտրակարգով ընտրությունների տվյալների ամփոփման արդյունքում սահմանված 5 տոկոսանոց անցողիկ շեմը հաղթահարեցին հետևյալ ուժերը[1].

1. ՀՀԿ - 44.11 %, 40 պատգամավոր
2. ԲՀԿ - 30.19 % տոկոս, 28 պատգամավոր
3. ՀԱԿ - 7.10 %, 7 պատգամավոր
4. Ժառանգություն - 5.78 %, 5 պատգամավոր
5. ՀՅԴ - 5.68 %, 5 պատգամավոր
6. ՕԵԿ - 5.52 %, 5 պատգամավոր

Այս արդյունքներին գումարվեցին նաև մեծամասնական քվեարկության արդյունքները, ինչի հետևանքով ՀՀԿ-ն ընդհանուր թվով ունեցավ 69, իսկ ԲՀԿ-ն՝ 33 պատգամավոր[2]: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության վերջնական զեկույցում արձանագրվում էր, որ «ընտրությունները, որոնք անցկացվել են բարեփոխված իրավական դաշտի ներքո, բնորոշվել են մրցակցային, ակտիվ և հիմնականում խաղաղ նախընտրական քարոզչությամբ, ինչը, սակայն, ընդգծվել է գործընթացների ամբողջականության նկատմամբ վստահության ցածր մակարդակով: Ընտրություններին մասնակիցների կողմից նախընտրական քարոզչության դրույթների որոշ խախտումներ, այդ թվում, վարչական միջոցների օգտագործումը և ընտրողների ընտրության ազատությունը սահմանափակելու փորձերը, ստեղծել էին անհավասար մրցակցային դաշտ և հակասում էին

[1] Տե՛ս ՀՀ ԱԺ 2012թ. համամասնական ընտրությունների պաշտոնական արդյունքներ, https://www.elections.am/proportional/election-24104/, հասանելի է 02.04.2021:

[2] Տե՛ս ՀՀ ԱԺ հինգերորդ գումարման խմբակցությունների կազմերը, http://www.parliament.am/deputies.php?lang=arm&sel=factions&SubscribeEmail=&show_session=5, հասանելի է 02.04.2022:

ԵԱՀԿ պարտավորություններին: Մինչև քվեարկության օրը, ընտրական գործընթացները կազմակերպվել են ընդհանրու առմամբ պրոֆեսիոնալ և թափանցիկ եղանակով: Քվեարկության օրը հիմնականում հանգիստ և խաղաղ էր, թեպետ դիտարկվել էին կազմակերպչական խնդիրներ և գործընթացին անհարկի միջամտություններ՝ հիմնականում կուսակցությունների ներկայացուցիչների կողմից: Մտահոգության տեղիք էր տվել դիմումների և բողոքների քննության գործընթացում առկա բացթողումները»[1]: Փաստորեն, ընտրությունների արդյունքում իշխող ՀՀԿ-ն ունեցավ բացարձակ մեծամասնություն ԱԺ-ում և կարող էր ինքնուրույն ձևավորել կառավարություն: Այսպիսով, Հայաստանի Հանրապետական կուսակցության դիրքերը էլ ավելի ամրապնդվեցին՝ դրանով իսկ ավելի սրելով Հայաստանում ձևավորված միաբևեռ քաղաքական համակարգը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Խորհրդարանական ընտրություններին կուսակցությունների մասնակցության վերևում նշված ժամանակահատվածի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեև Հայաստանի Հանրապետությունում կոնկրետ պատմաքաղաքական ժամանակահատվածում տեղի են ունեցել ընտրական համակարգի, կուսակցությունների գործունեության իրավական կարգավորումների շարունակական բարեփոխումներ, բայցևայնպես կուսակցությունների՝ խորհրդարանական ընտրություններին մասնակցության գործընթացում շարունակել են առկա լինել մի շարք էական բացթողումներ, ինչը արձանագրված է նաև տեղական և միջազգային դիտորդական առաքելություն իրականացնող անկախ կազմակերպությունների մի շարք զեկույցներում: Այս փաստը ապացուցելու է գալիս այն պնդումը, որ քաղաքական և հատկապես ընտրական գործընթացների դեմոկրատական բնույթը ապահովելու համար բավարար չէ միայն ժողովրդավարական չափանիշներին մոտ օրենսդրական դաշտի ապահովումը, անհրաժեշտ են նաև մի շարք օժանդակ գործոններ, ինչպիսիք են գործող իշխանությունների քաղաքական կամքը, երկրում առկա քաղաքական մշակույթը և այլն:

Нвер Костанян, Участие политических партий Третьей Республики Армения в 2003-2012 гг. парламентские выборы в контексте демократического перехода - В одном из предыдущих номеров научного

[1] Տե՛ս OSCE/ODIHR, Election Observation Mission Final Report, Republic Of Armenia, Parliamentary Elections, 6 May 2012, էջ 1-3, https://www.osce.org/files/f /documents/7/1/91643.pdf, հասանելի է 04.04.2022:

журнала «История и политика» мы говорили об особенностях деятельности политических партий в благоприятных правовых и политических условиях, сложившихся для политических партий в первое десятилетие после распада СССР и независимости Армении, в частности, их участие в парламентских выборах, зафиксированные ими результаты, роль партий в процессе демократических преобразований в Армении. Вышеупомянутая статья относилась к конкретному историко-политическому периоду: к парламентским выборам, состоявшимся в 1990-1999 гг. В этой статье мы постарались осветить период 2003-2012 гг. особенности участия политических партий РА в парламентских выборах. Также стоит отметить изучение выводов международных и местных независимых миссий по наблюдению за выборами, которое также проводилось широко.

Nver Kostanyan, Participation of political parties of the Third Republic of Armenia in 2003-2012 parliamentary elections in the context of democratic transition - In one of the previous issues of the scientific journal "History and Politics" we spoke about the features of the activities of political parties in the favorable legal and political conditions that prevailed for political parties in the first decade after the collapse of the USSR and the independence of Armenia, in particular, their participation in parliamentary elections, recorded their results, the role of parties in the process of democratic transformations in Armenia. The above article referred to a specific historical and political period: to the parliamentary elections held in 1990-1999. In this article, we tried to cover the period 2003-2012. features of the participation of political parties of the Republic of Armenia in the parliamentary elections. Also worth noting is the study of the findings of international and local independent election observation missions, which was also carried out widely.

Ուղարկվել է խմբագրություն 10.10.2022թ.
Գրախոսվել է 11.10.2022թ.
Ստորագրվել է տպագրության 23.10.2022թ.